ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 11.05.2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան <<13>> <<03>> 2015թ.

Քաղաքացի Վալտեր Գևորգյանը, այսուհետ՝ <<Վարձատու>>, մի կողմից և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, որի անունից համազայն 17.3.2015թ. տրված N 9 լիազորագրի հանդես է գալիս քաղաքացի Անահիտ Վիլենի Սարգսյանին, հաշվառված Լոռու մարզ ք.Ստեփանավանի, Վիրահայոց 92/2, անձնագիր AM 0450885, տրված 09.09.2011թ., 053 կողմից այսուհետ՝ <<Վարձակալ>>, ,մյուս կողմից երկուսը միասին այսուհետ՝<<Կողմեր>>, ղեկավարվելով Ստեփանավանի նոտարական գրասենյակում 11.05.2011թվականին՝ սեղանամատյանի գրանցում N 1415, կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 7.2. կետով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. 2011թվականի մայիսի 11-ին Ստեփանավանի նոտարական գրասենյակում՝ սեղանամատյանի գրանցում N 1415, կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը:

1.2. Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<3.1Վարձակալած տարածքի համար վարձակալը վճարում է վարձավճար՝Օբյեկտի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսական հազար (մեկ հազար) դրամ ընդամենը ամսական 99700 (իննսունինը հազար յոթ հարյուր) դրամ,ներառյալ ԱԱՀ-ն:>>

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է Կողմերի միջև 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Այլ պայմաններ

3.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՎԱՐՁԱՏՈՒ

Վալտեր Գևորգյան
ՀՀ Լոռու մարզ ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 2-րդ փողոց տուն 15
Բանկի անվանումը՝ <<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ Ստեփանավան մ/ճ
հ/հ 2470044758900010

Վ.Գևորգյան _____
(ստորագրություն)

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք N 3
Բանկի անվանումը՝ ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն,թիվ 3 ՏԳԲ
հ/հ՝ 900035164016
ՀԿՀՀ 01506515
Աշխատակազմի ղեկավար
Ա.Գրիգորյան _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Հանձնարարի վերադարձի հանձնման և ստացման ակտերը հաստատվեցին

2015թվ., մարտի տասնիններին, սույն համաձայնությունը վավերացվել է իմ՝ Ստեփանավան նոտարական տարածքի նոտար՝ Արսեն Հարությունյանի կողմից:
Համաձայնությունը Կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ:
Նրանց ինքնությունը, գործունակաությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցամատյան թիվ 601

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ ,, Պետական տուրքի մասին,, և ,, Նոտարիատի մասին,, օրենքների:

Նոտար՝ Ա. Հարությունյան